

#CloudViva ամպը համաշխարհային առաջատար արտադրողների կողմից ժամանակակից ծրագրա-ապարատային ապահովման հիման վրա ստեղծված և «Վիվա Արմենիա» (Երևան) ընկերության սեփական տվյալների կենտրոններում տեղակայված իափանույնների նկատմամբ դիմացկուն SS ենթակառուցվածք է, որը համապատասխանում է 99.95% հուսալիության մակարդակին:

Հաշվողական համալիր

Հաշվարկային համալիրը ներկայացված է Huawei CH121v5 բլեյդ-սերվերների կողմից, որոնք տեղակայված են Huawei Fusion Server E9000 ամրաշրջանակում:

Էլեկտրասնուցման, հովացման աղբյուրները և ցանցային մուտք-ելքի ֆաբրիկաները կրկնօրինակված են:

Հաշվողական համակարգերի բազայում ձևավորված են վիրտուալացման սեզմենտներ:

Սեզմենտի անվանում	VC
Տեղանք	Երևան
Սարքավորման տեսակ	Huawei
Ֆիզիկական CPU տեսակը	<u>CPU:</u> Xeon Gold 5118 2 x 24 Cores 2,3Ghz
MIPS-ի քանակը մեկ vCPU-ի համար ¹	3825

¹ Համակարգչային պրոցեսորի (CPU) արտադրողականության ցուցանիշները չափվում են 7 ZIP / 12MB ծրագրային ապահովմամբ (գործարկվում են վիրտուալ մեքենայի OZ-ից):

Տվյալների պահպանում

Տվյալների տեղադրման համար օգտագործվում են տվյալների պահպանման համակարգեր (ՏՊՀ).

- **Dell EMC Unity 350F**` SSD-սկավառակներով (All-Flash տարրազանգված)
- **HPE 3PAR 8400**` SSD-սկավառակներով (All-Flash տարրազանգված)
- **HPE MSA 2062**` HDD-սկավառակներով (SAS 10K LFF HDD)
- **DellEMC ME5024**` SSD-սկավառակներով (All-Flash տարրազանգված)

Յուրաքանչյուր համակարգ ունի երկու անկախ վերահսկիչ, ինչն ապահովում է գործունակություն ինչպես կանոնակարգային աշխատանքներ կատարելիս, այնպես էլ

առանձին վերահսկիչի անսարքության դեպքում: Յուրաքանչյուր վերահսկիչի էներգասնուցման և հովացման բլոկները կրկնօրինակված են:

Ցանցային ենթակառուցվածք

Ենթակառուցվածքի ցանցային մասը հիմնված է VPN VXLAN ֆաբրիկայի վրա, ինչը թույլ է տալիս ճկուն կերպով մշակել և մասշտաբավորել ցանցային ծառայությունները: Ֆիզիկապես ցանցային սարքավորումները կառուցվում են Cisco Nexus 5600 շարքի երկմակարդակ կոմուտատորների վրա:

Վիրտուալիզացիա

Որպես վիրտուալիզացիայի հարթակ օգտագործվում է VMware vSphere 7.0.3: Վիրտուալ ենթակառուցվածքի կառավարման համար հաճախորդներին տրամադրվում է ինքնասպասարկման անհատական վեբ-պորտալ, որը հիմնված է VMware vCloud Director 10.5 լուծման վրա:

Որպես ցանցի վիրտուալիզացիայի և վիրտուալ ենթակառուցվածքի անվտանգության ապահովման հարթակ օգտագործվում է VMware NSX 6.4.14: Կառավարման ինտերֆեյսը ինտեգրված է vCloud Director-ի հետ, ինչը թույլ է տալիս ինքնուրույն կառավարել լուծումը մեկ վեբ ինտերֆեյսից:

Պահուստային պատճենում

Որպես պատճենման համակարգ օգտագործվում է Veeam Backup & Replication 12.1: Լուծումը առաջարկում է տվյալների պատճենման և վերականգնման հնարավորություն: